ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հարություն Հարությունյան Կառլենի Ա/Ձ-ն ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Բարձր տեսակի ցորենի ալյուր (փաթեթավորումը՝ առավելագույնը 5 և 10 կգ՝ ըստ պատվերի): Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի, ալյուրի գույնը սպիտակ կամ սպիտակ՝ կրեմագույն երանգով, գործարանային փաթեթավորմամբ՝ համապատասխան մակնշումով: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0 %-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի ոչ ավել 0,55 %, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0 %: ՀՍՏ 280-2007 կամ համարժեք: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ սննդամթերքը պետք է ենթարկված լինի համապատասխանության գնահատման՝ համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011), Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի և մակնշված Եվրասիական տնտեսական միության տարածքում շրջանառության միասնական նշանով: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: Մատակարարումն իրականացվում է աշխատանքային օրվա

	ժամը 08:30-09:00 ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Սննդամթերքի փոխադրումը տրանսպորտային միջոցներով իրականացնելիս պետք է ապահովել հետևյալ պայմանները՝ տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովված լինի աղտոտումից, կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների ներթափանցումից, տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պետք է պատրաստված լինի լվացվող և ոչ թունավոր նյութերից և պետք է պարբերաբար ենթարկվի անհրաժեշտ մաքրման, լվացման և ախտահանման: Առաքողները պետք է ապահովված լինեն սանիտարական արտահագուստով (խալաթ և ձեռնոցներ): Տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 60 րոպե: Մատակարարումը կատարվում է Վաճառողի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել լաբորատոր փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Арутюн Арутюнян Карлени в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	.